ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 10. Պրոբացիայի ծառայությունում կոչումների շնորհման ժամկետները

1. Սույն օրենքով սահմանված կարգով հերթական կոչումների շնորհման համար սահմանվում են ~~Պրոբացիայի~~ ծառայության հետևյալ ժամկետները.

1) արդարադատության լեյտենանտի կոչում ունեցողի համար՝ երկու տարի.

2) արդարադատության ավագ լեյտենանտի կոչում ունեցողի համար՝ երեք տարի.

3) արդարադատության կապիտանի կոչում ունեցողի համար՝ երեք տարի.

4) արդարադատության մայորի կոչում ունեցողի համար՝ չորս տարի.

5) արդարադատության փոխգնդապետի կոչում ունեցողի համար՝ հինգ տարի:

2. Արդարադատության գնդապետի կոչումով ծառայության ժամկետ չի սահմանվում:

3. Արդարադատության լեյտենանտի կոչումը սկզբնական կոչումն է և շնորհվում է Պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակվելիս, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի: Պրոբացիայի ծառայության մյուս պաշտոններում նշանակվելիս ծառայողին շնորհվում է Պրոբացիայի ծառայության տվյալ պաշտոնին համապատասխանող կոչում:

4. Պետական այլ մարմնում ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում կամ դասային աստիճան կամ որակավորման դաս ունեցող քաղաքացիներին Պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակելիս շնորհվում է իրենց զինվորական կամ հատուկ կոչմանը կամ դասային աստիճանին կամ որակավորման դասին համապատասխան կոչում պաշտոնի նշանակվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

5. Պետական այլ մարմիններում շնորհված զինվորական կամ հատուկ կոչումների կամ դասային աստիճանների կամ որակավորման դասերի համապատասխանությունը սույն օրենքով սահմանված կոչումներին սահմանում է Կառավարությունը:

6. Պրոբացիայի ծառայողին կոչում կամ հերթական կոչում շնորհելը հետաձգվում է, եթե՝

1) պրոբացիայի ծառայողն ունի չմարված կարգապահական տույժ.

2) պրոբացիայի ծառայողի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, կամ նրա նկատմամբ իրականացվում է ծառայողական քննություն:

7. Հերթական կոչումի շնորհումը հետաձգելու դեպքում պրոբացիայի ծառայողի հերթական կոչումը շնորհվում է սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված հիմքերի վերացումից հետո՝ եռօրյա ժամկետում:

Հոդված 11. Պրոբացիայի ծառայությունում կոչումներով ծառայության ժամկետի հաշվարկումը

1. Պրոբացիայի ծառայությունում կոչումներով ծառայության ժամկետը հաշվարկվում է այդ կոչումի շնորհման մասին իրավական ակտի ստորագրման հաջորդ օրվանից: Հերթական կոչում շնորհելու ժամկետը հաշվարկելիս իջեցված կոչման ծառայության ժամանակահատվածը չի հաշվարկվում:

2. Պետական այլ մարմիններում ծառայած և Պրոբացիայի ծառայության պաշտոններում նշանակված պրոբացիայի ծառայողներին հերթական կոչումը շնորհելիս հաշվի է առնվում նաև այդ մարմիններում տվյալ կոչումով (դասային աստիճանով) ծառայության ժամկետը:

Հոդված 35. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները

1. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված խրախուսանքի տեսակները: Պրոբացիայի ծառայողների նկատմամբ խրախուսանք կիրառում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

2. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կարող է կիրառվել նաև արտահերթ կոչում, այդ թվում՝ իրենց զբաղեցրած պաշտոնի համապատասխան կոչումից ավելի բարձր կոչումի շնորհում խրախուսանքի տեսակը, որը պրոբացիայի ծառայողների նկատմամբ ծառայության ամբողջ ընթացքում կարող է կիրառվել մեկ անգամ: Արտահերթ կոչումի շնորհում խրախուսանքի տեսակը կիրառում է կոչումը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված խրախուսանքի տեսակը չի կարող կիրառվել Պրոբացիայի ծառայության պաշտոնին համապատասխանող՝ սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետով ~~1-ին մասով~~ սահմանված առավելագույն կոչում ունեցող պրոբացիայի ծառայողների նկատմամբ:

4. Որպես «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված խրախուսանքի տեսակների այլընտրանք՝ երկարամյա ծառայության կամ ծառայողական պարտականությունները կամ հանձնարարականները (առաջադրանքները) բարեխղճորեն կատարելու համար պրոբացիայի ծառայողը կարող է պարգևատրվել կրծքանշանով:

5. Կրծքանշանի տեսակները, ձևերը և շնորհման կարգը սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը: